# ՏԵՆՉ

Նուէր օր. Ան. Սերեբ.-ին.

Լռի՛ր դու, կա՛յծակ, պապանձուի՛ր որոտ,
Բացէ քո երես, կապուտակ երկինք,
Փայլիր դու, ա՛րեւ, քո սիրոյն կարօտ՝
Հոգեմաշ սրտով շատ սպասեցինք:

Թխպոտ է երկինք, սգաւոր մեր սիրտ,
Անվերջ հալածանք ցերեկ ու գիշեր,
Դէհ քա՛ւ, էլ հերի՛ք, մեզի կարեկցիր
Սփռիր մեր վերայ ցօղերդ կենսաբեր.

Թող փըրթի վարդը կանանչ պարտիզում,
Հնչէ սոխակի գեղգեղ սիրատապ,
Խոխոջայ վտակ խորունկ ձորակում՝
Հովասուն զեփիւռ շոյէ իմ ճակատ։

Թող սիրոյ հուրը այրէ բոլորին,
Փոշի դարձնէ նախանձի սերմեր,
Ոգի ներշնչէ խղճուկ գեղջուկին
Ու մեզ ամենիս նորանոր յոյսեր...

Եւ ալեկոծուի համայն բնութիւն—
Ցամքին թշուառի արցունք դարեւոր
Կենսատու ժպիտ, ճիչ ու խնդութիւն
Խլեն մեր սրտից յուշիկք ահաւոր:

Գուցէ եւ մի օր բացուի արշալոյս,
Փշրուած տեսնես, արեւ, մեր շղթան,
Իրականացած մեր հաւատ, մեր յոյս՝
Եւ ազատ անդորր մայր մեր Հայաստան։

ՍՏԵՓԱՆ ԳԱԲՐԻԷԼԵԱՆՑ

Ս. Պետերբուրգ.